ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

21 դեկտեմբերի շաբաթ 2024
տպագրության ԺԴ տարի

179
(3029)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԳԼԽԱՎՈՐ ՄԱՐԶԻՉԸ ԱՆՑԵԼ Է ՄԵԼԻՔԲԵԿՅԱՆԻ ԿՈՂՄԸ

«Առաջին հայկական ճակատ»-ի՝ ՖԱՖ-ի եւ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի՝ ՀՖՖ-ի շուրջ ստեղծված իրավիճակը չի հանդարտվում:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ֆուտզալի ազգային հավաքականի մարզիչ Ռուբեն Նազարեթյանը օրեր առաջ վիճաբանություն է ունեցել ՖԱՖ-ի ներկայացուցիչների հետ, որի ժամանակ հնչել են նաեւ հայհոյանքներ: Մեր տեղեկություններով՝ պատճառն այն է եղել, որ ՖԱՖ-ի ներկայացուցիչները պահանջել են Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Արմեն Մելիքբեկյանի հրաժարականը:

Վիճաբանությունը տեղի էր ունեցել Ֆուտզալի Հայաստանի Բարձրագույն խմբի առաջնության 2024-2025 մրցաշրջանում՝ նոյեմբերի 25-ին՝ «Երեւան ՖԱ»-ի եւ «Յունիսպորտի» միջեւ խաղից հետո:

Բանն այն է, որ գործող չեմպիոն «Երեւանը» այս մրցաշարում կրեց իր առաջին պարտությունը, որն էլ դարձել է կռվի պատճառ:

ArmLur.am-ի հետ զրույցում Ռուբեն Նազարեթյանը հերքեց տեղեկությունը՝ ասելով, որ ինքը հայ մարդու չի հայհոյում:

«Ես այս երկրի համար շատ բան արած մարդ եմ ու հայ մարդկանց չեմ հայհոյում, ես մենակ թուրքերին եմ հայհոյում, եթե մեջները թուրք եղել ա, միանշանակ կարող է հայհոյած լինեմ», - մեզ հետ զրույցում ասաց նա:

Ռուբեն Նազարեթյանը, բացի ՀՖՖ գլխավոր մարզիչ լինելուց, նաեւ մարզում է Ֆուտզալի «Երեւան» թիմին:

Հիշեցնենք, որ Ռուբեն Նազարեթյանը նախկինում ջերմ հարաբերություններ ուներ ՀՖՖ նախկին նախագահ Ռուբեն Հայրապետյանի հետ, սակայն նկատելի է, որ նա վերջին շրջանում, կարծես թե, անցել է Արմեն Մելիքբեկյանի կողմը եւ անմոռաց սատարում է ՀՖՖ ներկայիս նախագահին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԱԺ արտահերթ նիստը, որը այս շաբաթ էր նախատեսված, չեղարկվել է: Օրակարգում պետք է լիներ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին նախագիծը. ինչպես ArmLur.am-ը հայտնել էր՝ «նախագծով Հայաստանում աշխարհազորը կլուծարվի, փոխարենը կգործեն տեղական պաշտպանության ուժեր»: Նախագիծը դեկտեմբերի 17-ին քննարկվել էր ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի հանձնաժողովում, այն պետք է քննարկվեր նաեւ արդեն ԱԺ արտահերթ նիստում դեկտեմբերի 19-20-ին, սակայն չեղարկվեց: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ պատճառն այն է, որ պատգամավորներն արդեն պատրաստվում են Ամանորին. նրանց մի մասը մարզերում է, մի մասն էլ երկրում չէ, ուստի որոշվեց նիստը չեղարկել: Օրենսդիրն աշխատանքը կվերսկսի 2025 թվականի հունվարից:

Ներքին գործերի նորանշանակ նախարար Արփինե Սարգսյանը լծվել է նախարարության կարիքների համար կատարվող գնումների կատարման գործընթացին: Նիկոլ Փաշինյանի «պադավատապետության» ծառայողական մեքենաների կրճատումից հետո Արփինե Սարգսյանի ղեկավարած նախարարությունը չի խնայում կրճատված մեքենաների փոխարեն նոր մեքենաներ ձեռք բերել, սակայն ոչ ծառայողական: Ներքին գործերի նախարարությունը 3 մեքենա է ձեռք բերել՝ 1 հատի արժեքը 24 մլն դրամ, իսկ ընդհանուր արժեքով՝ 72 մլն դրամ արժողությամբ: Մեքենաները եղել են Mercedes մակնիշի «Սպրինտեր» 311CDI մոդելի:

Հիրավի հրաշքներ են կատարվում ՔՊ-ականների կյանքում: Չլիներ թավշյա իշխանափոխությունը՝ Աջափնյակի թաղապետ Սերոբ Սարգսյանը թերեւս առ այսօր աշխատեր որպես բուքմեյքերական կետի մասնագետ: Սակայն սույն հեղափոխականը ինտենսիվ տեմպերով բարելավում է իր կենսակերպը՝ հավանաբար Նիկոլ Փաշինյանի «Ապագա կա՛» կանխատեսումը գետնին չգցելու նկատառումով: Սարգսյանը, բացի նրանից, որ շատ արագ իր կնոջը (Ինեսա Հակոբյան) տեղավորում է Արաբկիրի թաղապետարանում աշխատանքի, ինքը եւս սկսում է աշխատել պետական բազմաբնույթ հիմնարկներում՝ Աջափնյակ վարչական շրջան, Չարենցավանի հաստոցաշինական գործարան, Շրջակա միջավայրի նախարարություն, «Հայփոստ», այժմ՝ կրկին Աջափնյակ վարչական շրջան: Եվ ահա, Սերոբ Սարգսյանի հայտարարագրերի համաձայն՝ նա 2024 թվականին ձեռք է բերել «Շեվրոլե» մակնիշի մեքենա եւ բնակարանի ձեռքբերման գործարքներ է արել՝ 27.6 միլիոն դրամի շրջանակում: Եթե այլ երկրներում հեղափոխության մասնակիցները, իշխանության գալով, սկսել են վարել ավելի համեստ կյանք քան մինչ այդ՝ ՀՀ-ում առանց բացառության բոլոր ՔՊ-ականների կյանքը շեշտակի եւ օր օրի բարելավվում է: Բարեբախտաբար, ինչը ունի սկիզբ, ունի նաեւ ավարտ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԶՐՈՒՅՑ

«ՆՈՍՏՐԱԴԱՄՈՒՍԸ ՉԵՄ, ՈՐ ԱՍԵՄ՝ ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԵՐԻՆ» Զ. ՍԻՆԱՆՅԱՆ

Մեծավոր արեւելքում դեռեւս 15 տարի առաջ սկսված լարվածությունը նոր փուլ է մտել: «Արաբական գարուն» անվանումը ստացած աշխարհաքաղաքական զարգացումների շրջայում իր ուրույն տեղն ունի Սիրիան, որտեղ պատերազմը կարելի է համարել «ավարտված»:

Դեկտեմբերի 8-ի առավոտյան Դամասկոսն ընկավ, իշխանությունը՝ հանձինս նախագահ Բաշար ալ Ասադի, Սիրիայի Պաշտպանության նախարարի եւ Արտաքին գործերի նախարարի եւ նրանց ընտանիքների լքեցին մայրաքաղաք Դամասկոսն ու ապաստանեցին Ռուսաստանի Դաշնությունում:

Ինչպես հայտնի է Սիրիայում երկար տարիներ եղել է հայկական Սփյուռքի ամենակարեւոր եւ ամենամեծ համայնքներից մեկը, որը այս տարիների պատերազմի ընթացքում «մաշվել» է, իսկ հիմա՝ տարակուսած է. Հայերը չգիտեն ինչ իրավիճակ կլինի երկրում, ինչ վերաբերմունք կլինի իրենց նկատմամբ եւ ինչ քաղաքականություն կմշակի նոր իշխանությունը՝ հաշվի առնելով հատկապես այն փաստը, որ իշխանության են եկել մուսուլման ծայրահեղականները, որոնք մինչեւ դեկտեմբերի 8-ը համարվում էին ահաբեկիչներ բազմաթիվ երկրների կողմից:

Հայկական այս գաղթօջախին առնչվող իրավիճակի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանի հետ՝հասկանալու, թե ինչ ճակատագիր է սպասվում Սիրիայում ապրող հայ համայնքին, ինչու ԱԳՆ-ն քայլեր չի ձեռնարկում՝ նրանց անվտանգ տարհանման համար:

-Պարոն Սինանյան, Սիրիայում ստեղծված իրավիճակի ֆոնին հայ համայնքից մեծացել է դժգոհությունն առ այն, որ դեսպանությունն իրենց հարցերին չի պատասխանում՝ փոխարենը աշխատանքները տեղափոխելով Լիբանանի մայրաքաղաք Բեյրութ: Ի վերջո ինչ է սպասվում հայ համայնքին:

-Նախ պետք է նշեմ, որ արտաքին գործերի նախարարության ներայացուցիչները, պայմանավորված ռազմական գործողությունների սրությամբ, տեղափոխվել էին Բեյրութ, սակայն վերադառնում են մշտական աշխատանքի վայր՝ Դամասկոս եւ կվերադառնան նաեւ Հալեպ: Այդ հարցը լուծվում է: Իսկ թե ինչ ճակատագիր է սպասվում մեր հայրենակիցներին. Այնպիսի հարց եք տալիս, որ դժվար է պատասխանել: Ես Նոստրադամուսը չեմ, որ ասեմ՝ ինչ ճակատագիր է սպասվում Սիրիայի հայերին:

-Պարոն Սինանյան, խոսքը նրա մասին է, որ նրանց մոտ անորոշ իրավիճակ է եւ չգիտեն, թե ինչպես կազմակերպվեն:

-Այդ անորոշությունը շարունակական բնույթ է կրում, պարզապես էությունն է փոխվում: Երբ նոյեմբերի 29-ին Հալեպը ընկավ մեկ այլ անորոշություն էր, իսկ երբ արդեն Դամասկոսը ընկավ մեկ այլ ձեւ անորոշություն էր: Այսօր արդեն մեկ այլ անորոշություն է՝ ո՛չ թե անձնական անվտանգության հետ կապված, այլ երկարաժամկետ իմաստով մեր հայրենակիցները, ինչպես բոլոր սիրիացիները, ցանկանում են հասկանալ իրենց ինչ ապագա է սպասվում այդ երկրում, քանի որ երկրի այսօրվա կառավարիչները ինքնին միատարր չեն: Այնքան շատ անհստակություն բերող գործոններ կան:

-Խոսքը հայերի քայլերի մասին է. Օրինակ տարհանման հետ կապված անորոշության:

-Տարհանման պահանջ պետք է լինի նախ, որը չկա: Նման պահանջ կար Հալեպի անկման հաջորդ օրը, Դամասկոսի անկամ ու Հալեպի անկման միջանկյալ շրջանում, բայց այս պահին նման պահանջ չկա:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՐՑԸ ՔՊ ՆԻՍՏՈՒՄ ԵՆ ՔՆՆԱՐԿԵԼ

ՔՊ կուսակցությունը նախաձեռնող նիստ է արել:

Ինչպես նախորդ նիստին, այս շաբաթ եւս իշխանականները շարունակել են քննարկել բնապահպանական խնդիրները:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հիմնականում մտահոգիչ վիճակ է Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքում, որտեղ շատ լուրջ բնապահպանական խնդիրներ կան, մասնավորապես ծառերի հատման, ջրի եւ շրջակա միջավայրի աղտոտվածության հետ կապված: Սրա վերաբերյալ ՔՊ նիստին ծավալուն զեկույց է ունեցել Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը:Բնապահպանական խնդիրների վերաբերյալ ելույթներ են ունեցել նաեւ Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանը, ՔՊ-ական պատգամավոր Հայկ Սարգսյանը: Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ նախորդ շաբաթ ՔՊ նախաձեռնող խմբի նիստին իշխանականները մի լավ քննադատել են առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին եւ շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանին, վերջինիս իշխանականները քննադատել են անգործության համար, ինչպես նաեւ բնապահպանական խայտառա իրավիճակի եւ անթույլատրելի չափով ծառերի հատման համար:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱԴՐԲԵՋԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության գործընթացը շարունակում է կենսական նշանակություն ունեցող ուղղություն մնալ Միացյալ Նահանգների գործող վարչակազմի եւ պետքարտուղարի համար, եւ Վաշինգտոնը կշարունակի աշխատել դրա վրա մինչեւ իր պաշտոնավարման վերջին օրը:

Այս մասին լրագրողների հետ ճեպազրույցի ընթացքում հայտարարել է ԱՄՆ պետքարտուղարության խոսնակի տեղակալ Վեդանտ Պատելն՝անդրադառնալով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման շուրջ բանակցություններին եւ այդ գործում Վաշինգտոնի գործադրած ջանքերին:

Անդրադարձ կատարելով լրագրողի հարցին, թե ԱՄՆ-ն հիասթափվա՞ծ չէ արդյոք, որ հայ-ադրբեջանական կարգավորման գործում Վաշինգտոնի գործադրած ջանքերը դեռեւս արդյունք չեն գրանցել՝Վեդանտ Պատելն ընդգծել է, որ ԱՄՆ-ն փորձում է չկենտրոնանալ հիասթափությունների վրա եւ պարզապես փորձում է շարունակել այդ աշխատանքը:

Նրա խոսքով՝ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը շատ անգամ է նշել, որ ինչ-որ արդյունքի հասնելու համար աշխատանքային բարդ օրեր են սպասվում:

«Այդ հարցը շարունակում է կենսական նշանակություն ունեցող ուղղություն մնալ այս վարչակազմի եւ պետքարտուղարի համար, եւ մենք կշարունակենք աշխատել դրա վրա մինչեւ մեր պաշտոնավարման վերջին օրը»,-շեշտել է Վեդանտ Պատելը:

ԱՆՍԱԼՈՎ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ՝ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ Է ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻՑ

Ախուրյան համայնքի ղեկավար Զավեն Մանուկյանը գրում է. «Ընդառաջ գնալով ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի Կառավարութայ նիստում արված հայտարարությանը, որտեղ ասված է, որ ծառայողական ավտոմեքենաների կրճատմանն ուղղված որոշումը բոլոր համայնքներում պետք է կիրառվի, Ախուրյան համայնքի ավագանու այսօրվա նիստում հայտարարել եմ, որ հրաժարվում եմ ինձ հատկացված ծառայողական ավտոմեքենայից՝ օրինակ ծառայելով այլոց:

Առաջնահերթը հանրային շահն է»:

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ ՆՈՐ ՊԱՇՏՈՆ Է ՍՏԱՑԵԼ

Առնակ Ավետիսյանը վերանշանակվել է Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի պաշտոնում: Այդ մասին տեղեկանում ենք ՀՀ վարչապետի ստորագրած որոշումից:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3.1-ին մասով եւ 9-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Առնակ Ավետիսյանին վերանշանակել պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի պաշտոնում»,- ասվում է որոշման մեջ:

ՏԿԵՆ ՏԵՂԱԿԱԼԸ ԱԶԱՏՎԵԼ Է ՊԱՇՏՈՆԻՑ

Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Վաչէ Տերտերյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով՝ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Վաչէ Տերտերյանին ազատել զբաղեցրած պաշտոնից», - նշված է վարչապետի որոշման մեջ:

«ՄՈՐՍ ԿՈՐՑՐԵՑԻՆՔ». ԱՂԱԶԱՐՅԱՆԻ ՈՐԴԻՆ՝ ՄՈՐ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Պատգամավոր Հովիկ Աղազարյանի որդին՝Հովսեփ Աղազարյանը գրել է.

«Մորս կորցրեցինք... Սրտի պլանային վիրահատությունը մեր ընտանիքի համար ճակատագրական էր:

Հոգեհանգիստը կկայանա վաղը՝ 21.12.2024թ.-ին, ժամը 17:00-ից, Այնթապ, Մասիսի խճուղի 2 հասցեում գործող «Alla Luce» սգո սրահում, հուղարկավորությունը՝ նույն վայրից, 22.12.2024թ.-ին, ժամը 13:00-ին»:

«Ժողովուրդ» օրաթերթին ավելի վաղ հայտնի էր դարձել, որ Հովիկ Աղազարյանի կինը մոտ 10 օր առաջ սրտի վիրահատություն է տարել, եւ վիճակը գնահատվում է ծանր:

ԲԱՔՈՒՆ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ ՊԱՀՎՈՂ 15 ԱՐՑԱԽՑՈՒ ՄԵՂԱԴՐՈՒՄ Է ՔՐԳՈՐԾԵՐՈՒՄ

Բաքվում ապօրինաբար կալանքի տակ պահվող Արցախի Հանրապետության նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանը, Արայիկ Հարությունյանը, Բակո Սահակյանը, ԱԺ նախկին նախագահ Դավիթ Իշխանյանը, ԱԳ նախկին նախարար Դավիթ Բաբայանը, գեներալներ Լեւոն Մնացականյանը, Դավիթ Մանուկյանը, ինչպես նաեւ Գարիկ Մարտիրոսյանը, Մելիքսեթ Փաշայանը, Դավիթ Ալավերդյանը, Գուրգեն Ստեփանյանը, Լեւոն Բալայանը, Մադաթ Բաբայանը, Վասիլի Բեգլարյանը, Էրիկ Ղազարյանը մեղադրվում են «ռազմական հանգագործությունների» վերաբերյալ գործի 2,548 դրվագով: Այս մասին հայտնում են ադրբեջանական լրատվամիջոցները:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՍԻՐԻԱՅՈՒՄ ԿԱ 2000 ԱՄԵՐԻԿԱՑԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ

ԱՄՆ-ն վերջերս ավելի քան կրկնապատկել է իր զորքերի թիվը Սիրիայում: Այս մասին հաղորդել է Պենտագոնի խոսնակ Պատրիկ Ռայդերը:

«Մոտ 2000 ամերիկացի զինծառայող Սիրիայում է», - ասել է նա ԱՄՆ պաշտպանության նախարարությունում կայացած ճեպազրույցում:

Նախկինում հաղորդվում էր, որ Սիրիայում մոտ 900 ամերիկացի զինծառայող է տեղակայված: Ռայդերը հայտնել է, որ սա Սիրիայում պաշտոնապես տեղակայված զորքերի թիվն է:

Ըստ Պենտագոնի խոսնակի՝ զորքերի թվի աճը որոշ ժամանակ շարունակվում է, դրանք այնտեղ են «առնվազն մի քանի ամիս»:

Նա ընդգծել է, որ լրացուցիչ ուժերն աջակցում են «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման դեմ պայքարի առաքելությանը եւ կապ չունեն Սիրիայում վերջին իրադարձությունների հետ:

Պենտագոնի խոսնակը բացատրել է, որ 900 հիմնական ամերիկացի զինվորականները գտնվում են երկրում 9-12 ամիս տեւողությամբ՝ պաշտոնական հանձնարարություններով, եւս 1100 զինվորական՝ ժամանակավոր հիմունքներով՝ 30-90 օր՝ «փոխվող առաքելության կարիքները բավարարելու համար»: Ընդ որում, լրացուցիչ զինվորականների մեծ մասը հատուկ ջոկատայիններ են:

Հարցին, թե ինչու պաշտպանության նախարարությունը նախկինում չէր հրապարակել թարմացված թվերը, Ռայդերն ասել է, որ ինքը դրանց մասին իմացել է միայն դեկտեմբերի 19-ին, եւ մեջբերել է «դիվանագիտական եւ օպերատիվ անվտանգության զգայունությունը»:

ԻՆՉՊԵՍ Է ՏԵՄՆՈՒՄ ՍԻՐԻԱՅԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Կահիրեում «Իսլամական ութնյակի» գագաթնաժողովի շրջանակում հանդիպում է ունեցել Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանի հետ, որտեղ նա հայտարարել է, որ Սիրիայի արագ վերականգնումը հնարավոր է միջազգային հանրության մասնակցությամբ: Այս մասին Թուրքիայի ղեկավարի վարչակազմը հայտարարել է բանակցությունների արդյունքներով:

«Նախագահ Էրդողանն ասել է, որ Թուրքիան ցանկանում է տեսնել Սիրիան որպես մի երկիր, որտեղ տիրում է կայունությունն ու անվտանգությունը, արմատախիլ է արվել ահաբեկչությունը, որտեղ փախստականները վերադառնում են կամավոր: Նա նշել է Սիրիայի տարածքային ամբողջականության եւ միասնության պահպանման անհրաժեշտությունը՝ ընդգծելով, որ Սիրիայում կայունացումը կծառայի ողջ տարածաշրջանի կայունությանը եւ անվտանգությանը, եւ դրա արագ վերականգնումը կարող է ապահովվել տարածաշրջանային եւ միջազգային բոլոր խաղացողների մասնակցությամբ»,- նշվում է հաղորդագրության մեջ:

Իր իրանցի գործընկերոջ հետ հանդիպմանը Էրդողանը նաեւ ասել է, որ Անկարայի եւ Թեհրանի հարաբերությունները «տարածաշրջանային կայունության հիմքն են», եւ կողմերը ներուժ ունեն երկկողմ ապրանքաշրջանառությունը տարեկան 30 միլիարդ դոլարի հասցնելու:

ԹԱԳՈՒՀԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

«ՓԱՇԻՆՅԱՆԸ ՊԵՏՔ Է ԶԲԱՂՎԻ ՄԱՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՎ»

Ամ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը գրում է.

«Դիմել եմ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, որպեսզի հանձնարարի իրավապահներին զբաղվել իմ մասին սուտ մատնություն կատարած, կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ, Տարոն Չախոյանի հայտարարություններով:

Հիշեցնեմ, որ նախօրեին իմ միջազգային գործընկերներին ուղարկել էի գրություններ՝ Հովիկ Աղազարյանի անձնական տվյալների պաշտպանության խախտումների մտահոգիչ փաստերի վերաբերյալ: Ներկայացրել էի ինչպես ներպետական օրենսդրությունը, այնպես էլ՝ միջազգային իրավունքի նորմեր, որոնք արգելում են մարդու անձնական գրագրության հանրայնացումը: Նաեւ շեշտել էի գրության մեջ, որ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տարոն Չախոյանի հետ փոխկապակցված կայքերը պատգամավոր Հովիկ Աղազարյանի սեռական կողմնորոշման մասին թիրախավորված հոդվածներ են գրել:

Իմ հանրային քաղաքական գործունեության արդյունքում՝ այդ գրություններից հետո, ես հայտնվել եմ Կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տարոն Չախոյանի թիրախում: Նա իր սոցցանցի էջում եւ իրեն փոխկապակցված կայքերում թույլ է տվել ոչ միայն վիրավորական ու անպատասխանատու գնահատականներ իմ անձի վերաբերյալ, այլեւ՝ տարածել է բացարձակ սուտ պատմություն, թե իբր տարիներ առաջ ես ապօրինի ձայնագրել եմ ինչ-որ նիստի ընթացքում Փաշինյանի խոսքերը եւ դա փոխանցել Սերժ Սարգսյանին: Ու բացի այդ, պարբերաբար ինֆորմացիոն արտահոսքեր եմ արել ՔՊ նիստերից:

Քանի որ ներկայացվածը ոչ միայն քաղաքացիաիրավական հարց է, այլ նաեւ քրեաիրավական գնահատականի անհրաժեշտություն կա, ապա

ՊԱՀԱՆՋԵԼ ԵՄ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՑ ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼ իրավապահ մարմիններին՝

● պարզելու, թե Սերժ Սարգսյանին փոխանցված ձայնագրությունը ո՞վ կամ ովքե՞ր, ե՞րբ եւ ի՞նչ պայմաններում են արել,

● ո՞վ կամ ովքե՞ր են մասնակցել այդ օրվա հանդիպմանը, ինչպե՞ս են ձայնագրել եւ ինչպե՞ս են փոխանցել Սերժ Սարգսյանին,

● Տարոն Չախոյանից պահանջել ներկայացնել իր հայտարարությունը ապացուցող փաստեր, չներկայացնելու դեպքում ՊԱՀԱՆՋԵԼ հարուցել նոր վարույթ նրա նկատմամբ՝ սուտ մատնության հատկանիշներով:

● Պարզել թե ես ՔՊ ո՞ր նիստին եմ մասնակցել, ի՞նչ արտահոսք եմ կազմակերպել: Եվ եթե կրկին նա չի կարողանա ներկայացնել ապացույցներ, որ արտահոսք եմ արել, ապա սուտ մատնության վարույթի շրջանակներում դիտարկել նրան պատասխանատվության ենթարկելու հարցը:

ՏԵՂԵԿԱՑՆԵՄ, որ՝

● Տարոն Չախոյանի կողմից հիշատակված ապօրինի ձայնագրության օրվա հանդիպմանը ես չեմ մասնակցել, հետեւաբար չէի կարող ձայնագրել (թեեւ ինձ համար ընդհանրապես մերժելի է գաղտնի ձայնագրություններ անելը)

● ՔՊ («Իմ քայլը») խմբակցության նիստերին 2019-ից սկսած 2 տարի չեմ մասնակցել՝ արտահոսքերի մեղադրանքներից խուսափելու համար: Հետեւաբար չէի կարող արտահոսք անել միջոցառումներից, որոնց չեմ մասնակցել:

Ակնկալում եմ Նիկոլ Փաշինյանի արագ արձագանքը, քանի որ այն անմիջականորեն կապ ունի Կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալի հետ, ով ինձ թիրախավորում է իմ քաղաքական եւ իրավապաշտպան գործունեության համար:

Ապօրինի ձայնագրություն կատարելը համարվում է օրինախախտում, եւ դրա իրականացնողը պետք է պատասխանատվության ենթարկվի: Իսկ եթե նման ձայնագրության մասին սուտ մատնություն է կատարվում որեւէ մեկի՝ այդ թվում նաեւ պետական պաշտոնիայի կողմից, նա նույնպես պետք է պատասխանատվություն կրի:

Տարոն Չախոյանը ստախոս է»:

ՕՐՎԱ

ՆՈՐ ՈՐՈՇՈՒՄ

Կառավարությունն ընդունել է որոշում՝ 2020 թ. հայտարարված ռազմական դրության եւ զորահավաքի շրջանակում ռազմատրանսպորտային պարտականություն ունեցող մարմիններից ներգրավված տրանսպորտային միջոցներին հասցված նյութական վնասի դիմաց այդ տրանսպորտային միջոցների սեփականատերեր հանդիսացող ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համարժեք փոխհատուցում տրամադրելու անհրաժեշտությամբ պայմանավորված:

Որոշմամբ հաստատվում են ռազմական դրության եւ զորահավաքի շրջանակներում ռազմատրանսպորտային պարտականություն ունեցող մարմիններից ներգրավված տրանսպորտային միջոցներին հասցված նյութական վնասի դիմաց այդ տրանսպորտային միջոցների սեփականատերեր հանդիսացող թվով 3 ֆիզիկական եւ իրավաբանական անձանց տրամադրվող փոխհատուցումների չափերը, նախատեսվում է անհրաժեշտ գումարը ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ պաշտպանության նախարարությանը հատկացումը:

ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՄԱՐԶՊԵՏԸ

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանը Շիրակի մարզպետի աշխատակազմին, համայնքների ղեկավարներին ու ուժային կառույցների ներկայացուցիչներին ներկայացրեց նորանշանակ մարզպետ Դավիթ Առուշանյանին: Նախարարը շնորհակալություն հայտնեց նախկին մարզպետ Մուշեղ Մուրադյանին այս ընթացքում կատարած աշխատանքի համար եւ հաջողություններ մաղթեց հետագա աշխատանքում:

«Այստեղ եմ նաեւ շնորհակալություն հայտնելու պարոն Մուրադյանին՝ վերջին երկու տարում որպես մարզպետ կատարած մեծածավալ աշխատանքի եւ այն ներդրման համար, որ ինքն ունեցել է Շիրակի մարզի զարգացման գործում: Մենք պարոն Մուրադյանի հետ թիմակիցներ ենք ու այս ընթացքում մեծ ծավալի աշխատանքներ ենք իրականացրել եւ վստահ եմ, որ պարոն Մուրադյանն իր ներուժը կշարունակի օգտագործել այն բնագավառում, որտեղ կորոշի, որ այդ ներուժի կարիքը կա»:

Նախարարը շնորհավորեց նաեւ Դավիթ Առուշանյանին պաշտոնի ստանձնման կապակցությամբ՝ վստահություն հայտնելով, որ կարճ ժամանակում նա կկարողանա լուծել այն խնդիրները, որոնք դրվել են ՀՀ կառավարության եւ Շիրակի մարզի առջեւ:

«Մեծ ծավալի աշխատանք կա անելու եւ վստահ եմ, որ պարոն Արուշանյանն իր բոլոր ջանքերը գործադրելու է այդ աշխատանքները կյանքի կոչելու համար: Վստահ եմ, որ մարզպետի աշխատակազմն ու համայնքների ղեկավարները կօգնեն իրականացնել այն աշխատանքը, որ դրված է ՀՀ կառավարության ու Շիրակի մարզի առջեւ»,-հավելեց ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանը:

ՈՐՈՇՈՒՄ

ՍՈՒՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՈՐԴԻՆ ԿԱԼԱՆՔԻՑ ԱԶԱՏՎԵՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Սյունիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի որդու՝ Տիգրան Խաչատրյանի նկատմամբ կիրառված կալանքը փոխվեց այլընտրանքային խափանման միջոցով:

Հիշեցնենք, թե ինչի համար է նա կալանավորված եւ ինչի համար է մեղադրվում.

Ավարտվել է Գորիս քաղաքում Տ.Խաչատրյանի կողմից հրազենի գործադրմամբ խուլիգանություն կատարելու եւ խուլիգանական դրդումներով մեկ անձի մարմնական վնասվածք հասցնելու դեպքի առթիվ ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

ՀՀ քննչական կոմիտեն ավելի վաղ տեղեկացրել էր, որ 2023թ. հունիսի 19-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, Տ.Խաչատրյանն իրեն պատկանող Mercedes-Benz մակնիշի ավտոմեքենայով, երկու մտերիմների հետ, գնացել է Գորիս քաղաքում գործող ավտոտեխսպասարկման կետ՝ մինչ այդ ավտոմեքենայի համար անվադողեր գնելու հարցի շուրջ հեռախոսային խոսակցության ընթացքում ծագած վիճաբանության կապակցությամբ պարզաբանումներ կատարելու նպատակով:

Անվադողերի վաճառքով զբաղվող, Գորիս քաղաքի 46-ամյա բնակչի հետ պարզաբանումներ կատարելու ընթացքում, չնչին առիթն օգտագործելով, իր սեփական անձի առավելություններն ընդգծելու եւ այդ կերպ հանդուգն վարքագիծ դրսեւորելու մոլուցքով տարված, խուլիգանական դրդումներով, նա վիճաբանություն էր հրահրել ավտոտեխսպասարկման կետի աշխատակիցների հետ, նրանց հասցեին հնչեցրել սեռական բնույթի հայհոյանքներ: Այնուհետեւ, համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ, ավտոտեխսպասարկման կետի հարեւանությամբ գտնվող քաղաքացիների, թաղամասի բնակիչների, սպասարկման կետերի անդորրը խախտելով, իր մոտ ապօրինի կրած հրազենով կրակոց էր արձակել 46-ամյա տղամարդու ուղղությամբ՝ վերջինիս պատճառելով առողջության միջին ծանրության վնասի հատկանիշներ պարունակող մարմնական վնասվածք եւ հեռացել դեպքի վայրից՝ թաքնվելով նաեւ քննությունից:

Վերջինս հետագայում հայտնաբերվել էր Երեւան քաղաքում եւ ներկայացվել վարույթն իրականացնող մարմնին:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա Տ. Խաչատրյանին վերջնական մեղադրանք էր ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով, 167-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 8-րդ եւ 12-րդ կետերով, 297-րդ հոդվածի 3-րդ մասով: Քննիչը միջնորդություն էր ներկայացրել դատարան՝ հաստատելու վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը, ինչը դատարանի որոշմամբ բավարարվել էր, եւ Տ. Խաչատրյանը կալանավորվել էր:

Վարույթի նյութերն ուղարկվել են հսկողություն իրականացնող դատախազին՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

Հավելենք նաեւ, որ վարույթով տուժող, Գորիս քաղաքի 46-ամյա բնակիչը, զգուշացված լինելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված՝ ցուցմունք տալու, ինչպես նաեւ 218-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ հարցերին ճշմարտացի պատասխանելու պարտականություն ունենալու մասին, չհանդիսանալով իր, ամուսնու, մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալու պարտականություն չունեցող անձ, ապօրինի հրաժարվել է Տ.Խաչատրյանի կողմից կատարված միջին ծանրության եւ ծանր հանցագործությունների դեպքերի առնչությամբ իրեն հայտնի հանգամանքների մասին ցուցմունք տալ: Նշված փաստի առթիվ նախաձեռնված առանձին վարույթի շրջանակներում որոշում է կայացվել՝ 46-ամյա անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, եւ նրան ներկայացվել է մեղադրանք:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԴԽ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՈՐԾԸ ՀԱՍԱՎ ՎԵՐՋՆԱԿԵՏԻ

ՍՊԱՍՎՈՒՄ Է ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԸ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ԲԴԽ նախկին նախագահ Ռուբեն Վարդազարյանի գործը հակակոռուպցիոն դատարանի վերջնական փուլում է. առաջիկայում ճառով հանդես է գալու մեղադրող դատախազը:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Ռուբեն Վարդազարյանը միջնորդություն է ներկայացրել դատարան՝ հարցաքննության հրավիրելու ԲԴԽ նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանին, նախկին Գլխավոր դատախազ Արթուր Դավթյանին եւ այլ անձանց, սակայն դատարանը մերժել է՝ պատճառաբանելով, թե նրանք մեղադրանքի հետ կապ չունեն:

Հիշեցնենք, որ Ռուբեն Վարդազարյանը մեղադրվում է արդարադատության իրականացմանը խոչընդոտելու համար: Վարդազարյանը, ըստ մեղադրանքի, 2019 թվականի հուլիսի 19-ից զբաղեցնելով ԲԴԽ նախագահի պաշտոնը, հանդիսանալով դատական իշխանության մարմնի ղեկավար աշխատող, միջամտել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Անդրանիկ Սիմոնյանի կողմից արդարադատության իրականացմանը: Ըստ Սիմոնյանի հաղորդման՝ Վարդազարյանը «ալավերդցի Վահագն» անունով հայտնի Վահագն Աբգարյանի գործով է իրեն դիմել: Աբգարյանը մեղադրվում է Ալավերդու բնակիչ Կամո Փիրուզյանի սպանությունը կազմակերպելու, ինչպես նաեւ սպանության գործով իր օգտին գործողություններ կատարելու եւ կաշառք տալու համար. գործով առկա է նաեւ ձայնագրություն:

Ըստ մեղադրանքի՝ Ռուբեն Վարդազարյանը Signal հավելվածի միջոցով կապ է հաստատել Անդրանիկ Սիմոնյանի հետ եւ վերջինիցս պահանջել (խնդրանքի եղանակով) փոխել Աբգարյանի խափանման միջոցը՝ կալանավորումը: Վարդազարյանն իրեն առաջադրված մեղադրանքը չի ընդունում:

Հիշեցնենք, որ խոսքը նույն Անդրանիկ Սիմոնյանի մասին է, որը այս գործից հետո նոր պաշտոն ստացավ՝ դառնալով ՀՀ ԿԱ ԱԱԾ տնօրենի տեղակալ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԾՆՈՂԻՑ ՓՈՂ Է ՀԱՓՇՏԱԿԵԼ

հափշտակել է խոշոր չափերի գումար՝ շիրմաքարեր պատրաստելու պատրվակով

2024 թվականի դեկտեմբերի 7-ին Քննչական կոմիտեի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում նախաձեռնված քրեական վարույթով առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ Ա.Ն.-ն զոհված զինծառայող եղբայրների գերեզմանների շիրմաքարերը պատրաստելու պատրվակով՝ խոշոր չափերի՝ շուրջ 4 մլն 807 հզր ՀՀ դրամ է հափշտակել վերջիններիս ծնողից, իսկ հետագայում տարբեր պատրվակներով հրաժարվել է վերադարձնել գումարը:

2024 թվականի դեկտեմբերի 9-ին հսկող դատախազը Ա.Ն.-ի նկատմամբ հարուցել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (խոշոր չափերով խարդախությունը):

Նախաքննությունը շարունակվում է, ձեռնարկվում են անհրաժեշտ գործողություններ՝ դեպքի հանգամանքներն ամբողջությամբ բացահայտելու, Ա.Ն.-ի կողմից այլ հանցավոր դրսեւորումներ կատարված լինելու հնարավոր վարկածը ստուգելու ուղղությամբ:

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ դեկտեմբերի 18-19-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 114 դեպք:

Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է անձնական ունեցվածքի գողության՝ 3, բնակարանային գողության՝ 1 դեպք:

Հայտնաբերվել է 8 հետախուզվող, կամավոր ներկայացել՝ 1-ը:

Հայտնաբերվել է 1 անհետ կորած:

Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձման 2 դեպք:

ԲԱՑ ՆԱՄԱԿ՝ ԲԱՆՏԻՑ

ՀՀ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կալանավոր Վանիկ Դանիելյանը «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն դիմում-խնդրանքով է դիմել.

«Ես գտնվում եմ հոգեկան լարված վիճակի մեջ, իմ այստեղ գտնվելու պատճառով իմ կարոտից տան 7 տարեկան երեխան հոգեկան վիճակի մեջ է, երեխուն հոգեբուժի եւ հոգեբանի մոտ են տանում: Ուստի ես օրվա մեջ մի քանի անգամ պիտի զանգեմ լսեմ: Ես զանգի համար նույնիսկ ինքնասպանության կգնամ: Սահմանված գարֆիկի իմ 20 րոպեն ես օգտագործում եմ օրվա մեջ 2-3 անգամ 6 րոպեով: Ու այժմ գրաֆիկով չեն թողնում այսպես, ոչ մի խնդիր դե իմ կյանքի առողջության համար էս հիմնարկնա պատասխան տալու»:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 19-ից 20-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 119 դեպք, որից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴԻԼԻՋԱՆՈՒՄ ՉՄԵՌՆ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ ԵՆ ՍԿՍԵԼ. ԾԱՌԵՐԸ ՈՉՆՉԱՑՆՈՒՄ ԵՆ

Դեկտեմբերի կեսին Դիլիջանի համայնքապետարանը քաղաքի Գետափնյա փողոցի ասֆալտապատման եւ մայթերի հիմնանորոգման սուբվենցիոն ծրագիրն է սկսել, որի արժեքը՝ պետական բյուջեի եւ համայնքի համաֆինանսավորումը ավելի քան 894 միլիոն դրամ է: Համայնքապետարանը հայտնում է, որ ի թիվս այլ աշխատանքների, փողոցի հին, հիվանդ ծառերը կփոխարինվեն նորերով: Դիլիջանի բնակիչները լրագրողիս բողոքել են, որ Գետափնյա փողոցի առողջ, հաստաբուն ծառերը ոչնչացնում են:

ԿԻՐԱՆՑԻ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԸ

Նոյեմբերի 24-ին Կիրանց գուղում մառախլապատ, ցուրտ եղանակ էր, նորակառույց դպրոցում ջեռուցման համակարգը չէր գործում, աշակերտները մրսում էին: 2024թ. սեպտեմբերի 1-ին շահագործման հանձնված, սահման հանդիսացող պատից մոտ 30 մետր հեռավորությամբ գտնվող շենքը պետք է ջեռուցվեր էլեկտրական մարտկոցներով: Սակայն դպրոցի ջեռուցման համակարգը չէր գործում, քանի որ նախկինում դպրոցը էլեկտրական հոսանք է ստացել Կիրանց գյուղից: Կիրանցի դպրոցում տեղադրված է արեւային կայան, որը պետք է թեթեւացներ դպրոցի ջեռուցման համար օգտագործվելիք էլեկտրականության ծախսը: Սակայն արեւային կայանը չէր գործարկվում էլեկտրական էռաֆազ հոսանքի գծի բացակայության պատճառով: Կիրանցի բնակիչները հայտնեցին, որ նոյեմբերի 25-ին էներգետիկները Կիրանցի դպրոց եռաֆազ հոսանքի գիծ էին անցկացնում: Դպրոցի շենքը շահագործման հանձնելուց անցել էր գրեթե 3 ամիս, ինչո՞ւ այդ ընթացքում Կիրանցի դպրոց հոսանքի գիծ չին անցկացրել: Դեկտեմբերի 4-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ նրան հարցնելով. «ո՞ր կազմակերպությունն է իրականացրել Կիրանցի դպրոցի նոր շենքի շինարարությունը, ե՞րբ է ստորագրվել շենքի կառուցման ավարտական ակտը, ինչո՞ւ նոյեմբերի 24-ի դրությամբ այդ դպրոցի շենքում ջեռուցման համակարգը գործարկված չէր»: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Տավուշի մարզի Իջեւան համայնքի Կիրանց բնակավայրի դպրոցի կառուցման պատվիրատուն հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեն: Դպրոցը ջեռուցվում է»: Տավուշի մարզպետը չգիտի՞, թե որ կազմակերպությունն է կառուցել Կիրանցի դպրոցի շենքը, Տավուշի մարզպետարանը,որի ենթակայությամբ է գործում Կիրանցի հիմնական դպրոցը, ինչո՞ւ չի վերահսկել, որ այդ դպրոցում ջեռուցման համակարգը նոր ուսումնական տարվա սկզբին, նորակառույց շենքը շահագործման հանձնելու ժամանակ, պատրաստ լիներ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԵՐԵՎԱՆՈՒՄ ՊԵՏՔ Է ՇՐՋԵԼ ԿԱՄ ՀԱԿԱԳԱԶՈՎ ԿԱՄ ԴԻՄԱԿՈՎ

ՕԴԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐԱՑԵԼ Է

Երեւանում պետք է շրջել կա՛մ հակագազով կամ քողիդյան ժամանակների դիմակով:

Թվացյալ գեղեցիկ մառախուղը, որ կապում ենք եղանակի հետ եւ հիանում ենք, ոչ թե մառախուղ է, այլ փոշու եւ կեղտի վտանգավոր ամպ:

Երեւանում օդի աղտոտվածությունը վերջին շրջանում դարձել է լուրջ խնդիր՝ գերազանցելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) սահմանած նորմերը: Մասնավորապես, օդի աղտոտվածության ինդեքսը, որը նորմայում պետք է չգերազանցի 50-ը, վերջին օրերին հասել է մինչեւ 430-ի, ինչը 5-7 անգամ գերազանցում է ԱՀԿ չափանիշները:

Օդի աղտոտվածության հիմնական պատճառներն են շինարարական աշխատանքները, տրանսպորտային միջոցների արտանետումները, ինչպես նաեւ ջեռուցման նպատակով վառելիքի այրումը: Ձմռան ամիսներին, երբ քամիները նվազում են եւ մառախուղը հաճախանում է, օդի աղտոտվածությունը հատկապես սրվում է:

Օդի բարձր աղտոտվածությունը կարող է առաջացնել առողջական լուրջ խնդիրներ, այդ թվում՝ շնչառական համակարգի հիվանդություններ, սրտի եւ ուղեղի կաթվածներ, ինչպես նաեւ թոքի քաղցկեղ:

Երեւանի քաղաքապետարանը ձեռնարկում է միջոցառումներ օդի որակի բարելավման ուղղությամբ, սակայն դրանք մինչ այսօր չեն ունեցել զգալի արդյունք: Մասնավորապես, տեղադրվել են օդի որակի դիտարկման 151 սարքավորումներ քաղաքի տարբեր հատվածներում՝ աղտոտվածության մակարդակը վերահսկելու համար: Սակայն հարկ է նշել, որ վերահսկումը դեռ խնդրի լուծում չէ:

Բացի սա, քաղաքապետարանը նախատեսում է մշակել քառամյա պլան՝ օդի աղտոտվածության նվազեցման համար, որը ներառում է կանաչապատման ծրագրեր, նոր ջրային ավազանների կառուցում, ինչպես նաեւ հին ավտոմեքենաների շահագործման սահմանափակումներ: Այս ամենը թղթի վրա է, եւ գործնականում մի քանի լաբորատոր հետազոտությունից բացի ոչինչ չի արվել:

Երեւանի պես փոքր քաղաքի համար, սա ոչ թե սովորական երեւույթ է, այլ աղետ է բնապահպանության եւ մարդկության համար, որի սպառնալիքներն ավելի մեծ են:

Խորհուրդ է տրվում օդի աղտոտվածության բարձր մակարդակի դեպքում հնարավորինս մնալ փակ տարածքներում, փակել պատուհանները, իսկ դրսում գտնվելու դեպքում՝ կրել դիմակներ եւ հաճախ լվանալ ձեռքերը եւ դեմքը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20–ԻՑ Armenian Airlines–Ը ՎԵՐՍԿՍՈՒՄ Է ՉՎԵՐԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉՎԱՑՈՒՑԱԿՈՎ

Armenian Airlines-ը դեկտեմբերի 20-ից վերսկսում է չվերթները: Նոր, թարմացված չվացուցակը եւ տոմսերի ամրագրումները հասանելի են ավիաընկերության պաշտոնական կայքում եւ զբոսաշրջային գործակալություններում:

Երեւան - Մոսկվա, դեկտեմբերի 20-ից՝ ամեն օր.

Երեւան - Սոչի, դեկտեմբերի 20-ից՝ ամեն երեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ եւ կիրակի օրերին.

Երեւան - Կազան, դեկտեմբերի 20-ից՝ ուրբաթ օրերին.

Երեւան - Միներալնիե Վոդի. դեկտեմբերի 21-ից՝ ամեն օր, բացի ուրբաթ եւ կիրակի օրերից.

Երեւան - Վոլգոգրադ, դեկտեմբերի 22-ից՝ կիրակի օրերին,

Երեւան - Ուֆա, դեկտեմբերի 25-ից՝ չորեքշաբթի օրերին:

«ԿՈՆՎԵՐՍ» ԲԱՆԿ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Կոնվերս Բանկում ամփոփել են C360 Neo, C360 Ultra եւ C360 Elite փաթեթների ներքո Visa քարտ ունեցող հաճախորդների համար իրականացված արշավի արդյունքները:

Դեկտեմբերի 18-ին գլխավոր մրցանակակրին են հանձնվել BYD Seagull էլեկտրամոբիլի բանալիները: 2-11-րդ մրցանակակիրներին են փոխանցվել 360 ԱՄՆ դոլարին համարժեք դրամային մրցանակները:

«Գոհունակությամբ փաստում ենք մրցույթի նկատմամբ հետաքրքրության եւ աշխարհագրական լայն ծածկույթի մասին. հաղթողների թվում են ոչ միայն մասնակիցներ Երեւանից, այլեւ մարզերից՝ Շիրակից, Տավուշից, Կոտայքից, Արմավիրից ու Արագածոտնից... Շնորհավորում ենք արշավի հաղթողներին: Բանկի հաճախորդներին հորդորում ենք լինել ակտիվ, հետեւել նորություններին եւ Converse Mobile-ը դարձնել ֆինանսական գործառնությունների հիմնական հարթակը: Հավելվածի օգտատերերի համար արշավներն ու մրցույթները պարբերական են լինելու: Եվ 360-ը կդառնա Ձեր հաջողության թիվը նաեւ 2025թ. համար:»,- ասել են Բանկում:

Հիշեցնենք, որ արշավի շրջանակում Կոնվերս Բանկն իր C360 փաթեթների ներքո Visa քարտ ունեցող հաճախորդներին էր առաջարկել 23.09.2024-23.11.2024թթ կատարել ընդհանուր առնվազն 30,000 ՀՀ դրամի գործարք կամ գործարքներ: Արժեքավոր նվերներ էին նախատեսված արշավի պահանջներին համապատասխանող յուրաքանչյուր 360-րդ հաճախորդի համար:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 16 պատահար. 22 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԳԵՐԱՐԱԳ ԻՆՏԵՐՆԵՏԻՑ ՄԻՆՉԵՎ ԴԱՄԱՖՈՆԱՅԻՆ ՈՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

15 տարվա պատմություն ունեցող Fnet Telecom-ը ֆիքսված կապի ծառայություններ է մատուցում Հայաստանի 7 մարզերում եւ Երեւանի ամբողջ տարածքում:

Ընկերության տրամադրած ծառայությունները բազմազան են՝ գերարագ ինտերնետից մինչեւ անվտանգության համակարգեր, հեռուստաալիքներ ու դամաֆոնային ծառայություններ:

Fnet Telecom-ի գործընկերն Ակբա Լիզինգն է, որի աջակցությամբ ընկերությունը վերազինվեց՝հնարավորություն տալով քաղաքացիներին օգտվել ավելի լավ ծառայություններից:

«Մեր գործունեությունը սկսել ենք 5-րդ Մասիվից, այնուհետեւ տարածվեցինք ամբողջ Երեւանում եւ մարզերում: Տելեկոմը միայն ինտերնետի եւ հեռուստաընկերությունների մասին չէ, այն նաեւ դամաֆոնների, ապահովության, անվտանգության մասին է: Տրամադրում ենք ոչ միայն ինտերնետ եւ հեռուստաալիքներ, այլ նաեւ դամաֆոններ բազմաբնակարան շենքերի եւ առանձնատների համար: Ակբա Լիզինգը մեզ առաջ մղեց՝ հնարավորություն տալով ձեռք բերել այսօրվա ամենազարգացած տեխնոլոգիաները, տեխնիկաները, որպեսզի դուրս չմնանք մրցակցությունից: Ակբա Լիզինգի հետ Հայաստան ենք ներմուծել բազմաթիվ սերվերային լուծումներ, 6G, այս պահին նաեւ 7G սարքավորումներ բաժանորդների համար, ինչպես նաեւ 30 նոր մեքենաներ, որոնց միջոցով կարողացանք տարածքային սպասարկող ինժեներներին էլ ավելի մեծ արագություն ու հարմարավետություն տալ»,- նշել է Fnet ընկերության գլխավոր տնօրեն Գեւորգ Ենգիբարյանը:

Մեծ ու համառ աշխատանքի շնորհիվ ընկերությունը դարձել է ոլորտի առաջատարներից մեկը՝ թվային ծառայություններ մատուցելով հազարավոր բաժանորդների:

Ակբա Լիզինգի 100% բաժնետերն Ակբա բանկն է:

Ակբա Լիզինգը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՀԵՂՈՒԿ ԳԱԶԻ ԳԻՆԸ ԱՃԵԼ Է

«Ժողովուրդ» օրաթերթը մշտապես հետաքրքրվել է, թե ինչպես է փոփոխվում հեղուկ գազի գինը:

Հեղուկ գազի շուկան մշտապես տարբեր գներ է ներկայացնում սպառողներին, այս անգամ հեղուկ գազի գինը կրկին բարձրացել է՝ տատանվելով 220-ից 230 դրամի սահմաններում:

Տնտեսագետ Սուրեն Պարսյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց, որ պատճառը Վերին Լարսի անցակետի փակ լինելն է՝եղանակային պայմաններից ելնելով, ինչպես նաեւ գազի գինը բորսայում է թանկացել:

Հիշեցնենք, որ նախկինում «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել էր տնտեսագետ Սուրեն Պարսյանի հետ, այն ժամանակ դեռ հեղուկ գազի գինը հասնում էր 200 դրամի:Ս

ԱՄԱՆՈՐՅԱ ԱՄԵՆԱԱՆՆԱԽԱԴԵՊ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ-ՏՈՆԱՎԱՃԱՌԸ

Big Christmas Market-Ը՝ ԻԴՐԱՄԻ, IDBank-Ի ՈՒ idplus-Ի ՀԵՏ

Դեկտեմբերի 18-ին մեկնարկել է ամենամեծ, մասշտաբային ու հեմիսֆերային Big Christmas Market with Coca-Cola ցուցահանդես-տոնավաճառը: Հարյուրավոր գունեղ, ամանորյա շնչով տաղավարներ, լույսեր ու տոնական ա՜ոտ բարձր տրամադրություն է Մերիդիան էքսպո կենտրոնում: Ամենուր անակնկալներ են, խաղարկություններ ու նվերներ:

IDBank-ի, Իդրամի եւ idplus լոյալության հարթակի տաղավարում էլ թիմը դիմավորում էր հյուրերին ու պատմում տոնական բոնուսների մասին: Տոնավաճառի գրեթե բոլոր տաղավարներում հնարավոր է վճարել Իդրամով եւ բոնուսներ ստանալ: Իսկ տաղավարում անգամ տերմինալներ կան, որպեսզի հաճախորդները կարողանան լիցքավորել իրենց դրամապանակներն ու վճարումներ կատարել QR-ով՝ օգտվելով բացառիկ բոնուսներից:

Idplus պրոդուկտի գործառնական աջակցության ղեկավար Ջինահդա Մարտիրոսյանի խոսքով՝ Idplus լոյալության հարթակն արդեն բազմաթիվ գործընկերների եւ հաճախորդների համար սիրված է. «Հաճախորդները պարզապես իրենց գնումների դիմաց բոնուսներ են ստանում՝ առօրյա գնումները դարձնելով շահավետ: Նոր տարին էլ, իհարկե, լավագույն առիթն էր մեր հաճախորդներին անակնկալներ մատուցելու. ամենաջերմ ու ընտանեկան տոնին ընդառաջ Big Christmas Market-ի շրջանակում մեր հաճախորդները գրեթե բոլոր տաղավարներից կարող են գնումներ կատարել եւ ստանալ 25% բոնուս, իսկ կուտակված բոնուսները կարող են հենց այս տոնավաճառի շրջանակում տաղավարներից գնումներ կատարելիս օգտագործել», - ասաց Ջինահդա Մարտիրոսյանը:

Իդրամի եւ IDBank-ի մարքեթինգի ղեկավար Տաթեւիկ Հովհաննիսյանը նշեց, որ բոնուսները միակ շահավետ առաջարկը չեն, որ ներկայացնում են ընկերությունները. «Տոնավաճառի շրջանակում էլ գործելու է Rocket Line թվային ապառիկը, որ հնարավորություն կտա հաճախորդներին ցանկության դեպքում ավելի շատ գնումներ կատարել շահավետ առաջարկներով եւ հետաձգել վճարումները»:

Big Projects ընկերության մարքեթինգի եւ հաղորդակցության ղեկավար Դիանա Հարոյանն էլ ասաց, որ IDBank-ը, Իդրամն ու idplus-ը առաջին տարին չէ, որ համագործակցում են Big Projects-ի ինչպես այս տոնավաճառին, այնպես էլ մնացած բոլոր ցուցահանդեսներին. «Big Christmas Market-ին ընկերություններն ամեն տարի միանում են եւ ամեն տարի մի նոր նվեր առաջարկում մեր այցելուներին ու տոնավաճառին», - նշեց Դիանա Հարոյանը:

Ի դեպ, IDBank-ը, Իդրամն ու idplus-ն այս տարի որպես հովանավորներ են միացել տոնավաճառին:

Հիշեցնենք նաեւ, որ տոնավաճառն այս տարի անցկացվելու է մինչեւ դեկտեմբերի 22-ը:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԵՆ ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ

ՍԻՄՖՈՆԻԿ ՄԵՂԵԴԻՆԵՐ» ՀԱՄԵՐԳԻ ՊՐԵՄԻԵՐԱՆ

«Ֆասթ» բանկի եւ «Ֆասթ» Շիֆթի աջակցությամբ Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի է ունեցել «Արթուր Գրիգորյան. սիմֆոնիկ մեղեդիներ» խորագրով համերգի պրեմիերան: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը ներկայացրել է ՀՀ ժողովրդական արտիստ Արթուր Գրիգորյանի 16 սիմֆոնիկ ստեղծագործությունները, որոնք կենդանի կատարմամբ հնչեցին առաջին անգամ: Համերգի գեղարվեստական ղեկավարն ու դիրիժորը Սերգեյ Սմբատյանն էր, ստեղծագործությունների մշակումը՝ Մարտին Ուլիխանյանի:

Հայաստանի երգի պետական թատրոնի տնօրեն, Արթուր Գրիգորյանի դուստր Մանե Գրիգորյանը խոստովանել է, որ այս նախագիծն իր կյանքի ամենամեծ նախագիծն է. «Անչափ շնորհակալ եմ Ֆասթ Բանկին եւ «Ֆասթ» Շիֆթ ընկերությանը, որոնք մշտապես որակյալ համերգների կողքին են եւ աջակցում են դասական հետաքրքիր երաժշտական նախագծերին, այդ թվում մեր համերգին: Սա այն նախագիծն է, որ թողնելու ենք մեզնից հետո հաջորդող սերունդներին: Որովհետեւ երաժշտությունն ազգություն չի ճանաչում: Սա մեր մեծ նվերն է աշխարհին: Մենք հույս ունենք, որ Արթուր Գրիգորյանի երաժշտությունը կփոխանցի այն սերն ու բարությունը, որն ուներ կոմպոզիտորը», - ասել է նա:

«Ֆասթ» Բանկը եւ «Ֆասթ» Շիֆթ ընկերությունը շարունակելու են մշտադիտարկել Հայաստանի մշակութային խնդիրները եւ անել առավելագույնը՝ աջակցելու ոլորտի զարգացմանը:

«Ֆասթ» Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը: «Ֆասթ» բրենդն այս տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿԻ Mastercard ՔԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայէկոնոմբանկը Mastercard քարտերի ակցիայի շրջանակներում մինչեւ 2025թ. մարտի 31-ը անցկացնում է մրցույթ՝ հնարավորություն տալով քարտապաններին շահել արժեքավոր նվերներ:

Մրցույթին կարող են մասնակցել Բանկի բոլոր Mastercard քարտապանները, ովքեր նշված ժամկետում կկատարեն առնվազն 50,000 դրամ գումարային արժեքով անկանխիկ գործարք: Գործարքների հանրագումարային յուրաքանչյուր 50,000 դրամի դիմաց քարտապանը կստանա մասնակցության մեկ անհատական կոդ, ինչը թույլ կտա մեծացնել հաղթելու հավանականությունը՝ կախված գործարքների ծավալից:

Մրցույթի ընթացքում կխաղարկվեն հետեւյալ մրցանակները.

- 5 հատ iPhone 16 Pro սմարթֆոն
- 7 հատ AirPods 4 ականջակալ

Մրցույթի հաղթողները կճանաչվեն պատահականության սկզբունքով՝ քարտապաններին տրամադրված անհատական կոդերից պատահական ընտրության միջոցով, իսկ արդյունքների ամփոփումը կիրականացվի Բանկի ֆեյսբուքյան էջի միջոցով՝ մինչեւ 2025թ. ապրիլի 30-ը ներառյալ: Մրցույթի իրականացման օրվա եւ ժամի մասին բոլոր մանրամասները մասնակիցներին կծանուցվեն քարտապանների՝ Բանկում գրանցված էլեկտրոնային հասցեին, իսկ բացակայության դեպքում՝ հեռախոսահամարին:

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների անհատական կոդերը կիրապարակվեն Բանկի պաշտոնական կայքում եւ ֆեյսբուքյան էջում՝ մինչեւ 2025թ. ապրիլի 30-ը ներառյալ:

Ակցիայի ժամանակահատվածում Mastercard քարտերը հնարավոր է ձեռք բերել զեղչված արժեքով AEB Mobile/Online համակարգի միջոցով պատվիրելու դեպքում՝

- Mastercard թվային քարտ՝ անվճար, ինչպես նաեւ միջազգային անկանխիկ գնումներ կատարելու դեպքում՝ 2% cashback,
- Mastercard Standard ՝ 1,000 դրամ,
- Mastercard Gold՝ 7,500 դրամ,

Իսկ Բանկի մասնաճյուղերում կամ Գլխամասային գրասենյակում քարտի դիմում ներկայացնելու դեպքում՝

- Mastercard Standard՝ 2,000 դրամ,
- Mastercard Gold՝ 10,000 ՀՀ դրամ,

Մրցույթի եւ ակցիայի ամբողջական պայմաններին հաճախորդները կարող են ծանոթանալ Բանկի պաշտոնական կայքէջում:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

9 ՄԼՆ ԴՐԱՄ՝ ԱՄԱՆՈՐՅԱ ԶԱՐԴԱՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երեւանի քաղաքապետարանը ամանորյա եռուզեռի եւ նախատոնական աշխատանքների մեջ է: Տարբեր վարչական շրջաններ արդեն իսկ դատարկվում են ամանորյա տոնական միջոցառումներին՝ դրանց հետ մեկտեղ ապահովելով տարբերվող եւ յուրօրինակ զարդարանքներով:

Հենց նման նախաձեռնության շրջանակում էլ Նոր Նորք վարչական շրջանի ամանորյա ծառայությունների ձեռքբերումների համար Երեւանի քաղաքապետարանը հատկացրել է 9 մլն դրամ:

Քաղաքապետարանը Երեւան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի «Ամանորյա տոնական ձեւավորում» միջոցառման ծառայությունը ձեռք է բերել «ԼԵԴ ՕՆ» ՍՊԸ-ից: Այս պայմանագիրը պետական գնումներում միակն է «ԼԵԴ ՕՆ» ՍՊԸ-ի հետ:

Պայմանագրի շրջանակներում անհրաժեշտ է իրականացնել տոնական ձեւավորում՝

Վարչական շենքի առկա դիմային լուսավորության ստուգում, թերությունների հայտնաբերում եւ վերականգնում, շենքի տանիքի կենտրոնական հատվածում տեղադրել մետաղյա կարկասով թվեր՝ 4 հատ 1,5 մետր բարձրությամբ:

Անհրաժեշտ է ապահովել Գայի արձանի տարածքի լուսավորությունը, որի համար անհրաժեշտ է 120-130 մետաղյա ձյան փաթիլներ՝ ըդգծված երկկողմ լեդ լույսերով:

Անհրաժեշտ է Գայի պողոտայում տեղադրել 1 հատ սահնակով եղնիկ: Վարչական շրջանի կողմից տրամադրել մետաղյա գունդ:

Միկոյան-Գալշոյան փողոցների օղակաձեւ տարածքում տեղադրել տոնածառ՝ ձեւավորված լեդ լույսերով: Գայի պողոտա-Թեւոսյան փողոց-Բադալ Մուրադյան խաչմերուկը ձեւավորել եւ տեղադրել տոնական դեկորներ:

Վարչական շրջանի կողմից տրամադրված 11 հատ եղեւնիների վերանորոգում եւ տեղադրում: Դավիթ Բեկ փողոցի երկայնքով ծառերը խիտ լուսավորել, 100-110 ծառ՝ ձեւավորել լեդ լույսերով:

Նախատեսվում է՝ Նոր Նորքի 8-րդ զանգվածի արծվի հուշարձանի տարածքի ձեւավորումը: 3-րդ եւ 4-րդ զանգվածների միջակայքում գտնվող տարածքն անհրաժեշտ է ձեւավորել: 4-րդ եւ 5-րդ զանգվածները կապող կամուրջը երկու կողմից լույսերով ձեւավորել:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ 7 մլն ծախսվել էր Էրեբունի վարչական շրջանի ամանորյա զարդարանքների համար, 15 մլն՝ Արաբկիրի վարչական շրջանի ամանորյա զարդարանքների համար, 8 մլն դրամ՝ Շենգավիթի ամանորյա զարդարանքների համար:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՅՍ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ամփոփվել են ուսուցիչների կամավոր ատեստավորման 2024 թվականի արդյունքները՝ ներառյալ նաեւ բողոքարկումից հետո կատարված փոփոխությունները:

Ուսուցիչների կամավոր ատեստավորման գործընթացն այս տարի առաջին անգամ կազմակերպվել է էլեկտրոնային ձեւաչափով, որին մասնակցության համար դիմել է 6260 ուսուցիչ, որոնցից 572-ը՝ որպես չաշխատող անձ:

Հայտագրվածներից ատեստավորմանը մասնակցել են 4982-ը, որոնք ցուցաբերել են հետեւյալ արդյունքները՝

. 60-69% արդյունք ցուցաբերել է 1073-ը. նրանք ունենալու են միայն դրույքաչափի փոփոխություն /200 հազար դրամ՝ 1 դրույք զբաղվածության համար/

. 70-79% արդյունք են ցուցաբերել 1158-ը (հավելավճարը կտրվի մանկավարժական աշխատավարձի 30 տոկոսի չափով),

. 80-89% արդյունք է ցուցաբերել 989-ը (հավելավճարը կտրվի մանկավարժական.աշխատավարձի 40 տոկոսի չափով),

. 90-100% արդյունք է ցուցաբերել 600-ը (հավելավճարը կտրվի մանկավարժական աշխատավարձի 50 տոկոսի չափով),

. 0-59 տոկոս արդյունք է ցուցաբերել 1162-ը:

Գործող ուսուցիչներից 2024 թվականին կամավոր ատեստավորմանն առաջին անգամ մասնակցել են 2825-ը, այս պահին չաշխատող եւ առաջին անգամ մասնակցած անձանցից գործընթացին առաջին անգամ մասնակցել են 272-ը: 60 տոկոսի շեմն առաջին անգամ մասնակցածներից հաղթահարել են 2250-ը, նախորդ տարիների համեմատ արդյունքը բարելավել են 1248-ը: 538 ուսուցչի գրանցած արդյունքները չեն փոխվել: Բարձրագույն կրթություն չունեցող անձանցից 124-ը մասնակցել է կամավոր ատեստավորմանը եւ արդյունքում հաղթահարել է անցողիկ շեմը:

Բողոքարկումից առաջ արձանագրված էր հետեւյալ պատկերը՝ 0-59 % արդյունք էր ցուցաբերել 1350 ուսուցիչ/անձ, 60-69 % ՝1127-ը, 70-79 %՝1074-ը, 80-89 %՝918-ը, 90-100 %՝529-ը:

ՀՀ ԿԳՄՍՆ Հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչություն

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԱՎԱՃԱՌ

Հայաստանը Վիեննայում առանձին տաղավարով շարունակում է մասնակցել Շպիտելբերգի Սուրբ Ծննդյան տոնավաճառին: Եվս մի քանի օր՝ մինչեւ դեկտեմբերի 23-ը, հայկական տաղավարում կցուցադրվի շուրջ 70 վարպետի ձեռագործ աշխատանք՝ փայտարվեստի, ասեղնագործության, թաղիքագործության, խեցեգործության, տիկնիկագործության, մետաղագործության նմուշներ, ամանորյա խաղալիքներ, հուշանվերներ:

Հայկական տաղավարն առանձնահատուկ է իր բազմազան նմուշներով, եւ արժանանում է բազմաթիվ այցելուների ուշադրությանն ու հիացմունքին:

Այս տարվա Շպիտելբերգի տոնավաճառն ունի բնապահպանական շեշտադրում, եւ հայկական տաղավարը եւս հավատարիմ է մնացել դրան՝ ներկայացնելով վերամշակված թղթից ափսեներ, որոնք արտադրվում են Խնձորեսկում:

Ծրագիրն իրականացնում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը՝ Երեւանի քաղաքապետարանի հետ համատեղ, ՀՀ արտաքին գործերի նախարարության աջակցությամբ, «Մշակույթի զարգացման» հիմնադրամի, Ժողովրդական արվեստների թանգարանի եւ «Ֆաստեքս» ընկերության եւ հետ համագործակցությամբ:

Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում Շպիտելբերգի Սուրբ Ծննդյան տոնավաճառն իրականացվում է դեռեւս 1970-ականներից: Այն Վիեննայի ամենահայտնի Սուրբ Ծննդյան տոնավաճառներից է, որն ամեն տարի գրավում է հազարավոր այցելուների: Տոնավաճառը տեղի է ունենում Վիեննայի պատմական Շպիտելբերգ թաղամասի Շպիտելբերգգասե, Գուտենբերգգասե եւ Շրանկգասե հետիոտնային փողոցներում, որոնք առանձնանում են իրենց ճարտարապետությամբ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ՀԵՏ ՄԵՆԱՄԱՐՏԸ ԱՄԵՆԱԴԺՎԱՐՆԵՐԻՑ ՄԵԿՆ ԷՐ

UFC-ի թեթեւ քաշային կարգում գործող չեմպիոն Իսլամ Մախաչեւը խոստովանել է, որ կարիերայի ամենածանր մենամարտը եղել է ավստրալացի Ալեքսանդր Վոլկանովսկիի դեմ առաջին հանդիպումը:

«Ծառուկյանի հետ մենամարտը ամենադժվարներից մեկն էր, սակայն դա ամենածանրը չէր: 5 ռաունդ Վոլկանովսկու հետ. դա խենթություն էր: Ձարկերակս հասնում էր 200-ի»,- ռուսաստանցի մարտիկի խոսքերը մեջբերում է ESPN-ը:

Հիշեցնենք, որ հունվարի 18-ին Մախաչեւը տիտղոսի պաշտպանության մենամարտ է անցկացնելու թեթեւ քաշային կարգի դասակարգման աղյուսակի առաջատար Արման Ծառուկյանի հետ:

2019 թվականին հայ մարտիկը UFC-ում նորամուտը նշել էր Մախաչեւի դեմ մենամարտով եւ պարտվել մրցավարների որոշմամբ:

ՖԻՖԱ–Ն ԹԱՐՄԱՑՐԵԼ Է ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԸ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՐԿԻՆ ՆԱՀԱՆՋԵԼ Է

Այսօր՝ դեկտեմբերի 19-ին ՖԻՖԱ-ն հրապարակել է ազգային հավաքականների դասակարգման վարկանիշային թարմացված աղյուսակը: Հայաստանի ազգային հավաքականն նահանջել է եւս մեկ հորիզոնականով եւ այժմ զբաղեցնում է 100-րդ տեղը: Այս մասին հայտնում է ՖԻՖԱ-ի պաշտոնական կայքը:

Արգենտինայի ընտրանին պահպանել է առաջատարի դիրքը: Իրենց տեղերը պահպանել են նաեւ առաջատար տասնյակի բոլոր մյուս ազգային ընտրանիները:

1. Արգենտինա
2. Ֆրանսիա
3. Իսպանիա
4. Անգլիա
5. Բրազիլիա
6. Բելգիա
7. Նիդերլանդներ
8. Պորտուգալիա
9. Կոլումբիա
10. Իտալիա

100. Հայաստան:

● *Դեկտեմբերի 21-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Հոբելյանական հաճախորդ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Որո՞նք են պետության եւ համայնքների սեփականությանը պատկանող հողերի անհատույց (մշտական) օգտագործման տրամադրման կարգերը:

Սարգիս Իգիթյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Պետության եւ համայնքների սեփականությանը պատկանող հողերն առանց մրցույթի, անհատույց (մշտական) օգտագործման են տրամադրվում՝

- պետական կամ համայնքային հիմնարկներին ու կազմակերպություններին,
- բարեգործական, հասարակական կազմակերպություններին եւ հիմնադրամներին՝ իրենց գործունեության ընթացքում ձեռնարկատիրության հետ չկապված գործունեություն իրականացնելու համար,
- Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին),
- «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ՊՄԳ ծրագրի շրջանակներում՝ մասնավոր գործընկերոջը:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Օրենքով եւ այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության եւ համայնքների սեփականությանը պատկանող հողերը մշտական օգտագործման է տրամադրում համայնքի ղեկավարը՝ լիազորված պետական մարմնի գրավոր հայտի հիման վրա՝ հայտն ստանալու պահից՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ե՞րբ կարող է վերականգնվել ծնողական իրավունքները:

Իրինա Սաղաթելյան (28 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ծնողական իրավունքները կարող են վերականգնվել, եթե ծնողները կամ նրանցից մեկը փոխել են իրենց վարքագիծը, կենսաձեւը եւ (կամ) երեխայի դաստիարակության նկատմամբ վերաբերմունքը:

Ի Ծնողական իրավունքները վերականգնվում են դատական կարգով՝ ծնողական իրավունքներից զրկված ծնողի դիմումի հիման վրա: Ծնողական իրավունքների վերականգնման մասին գործերը քննվում են խնամակալության եւ հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ:

Ի Ծնողական իրավունքների վերականգնման մասին դիմումի հետ միաժամանակ կարող է քննության առնվել նաեւ երեխային ծնողներին կամ նրանցից մեկին վերադարձնելու մասին պահանջը:

Ի Երեխայի նկատմամբ ծնողական իրավունքների վերականգնումը կատարվում է՝ հաշվի առնելով նրա կարծիքը: Դատարանը, հաշվի առնելով երեխայի կարծիքը, իրավունք ունի մերժելու ծնողական իրավունքների վերականգնման հայցը, եթե ծնողական իրավունքների վերականգնումը հակասում է երեխայի շահերին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ծնողական իրավունքների վերականգնում չի թույլատրվում, եթե երեխան որդեգրված է, եւ որդեգրումը սահմանված կարգով չի վերացվել:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Ֆուտբոլի Կոնֆերենցիաների լիգայի փլեյ-օֆֆի մասնակից թիմերը հայտնի են:

Լիգայի փուլում 1-8-րդ տեղերը զբաղեցրած թիմերը՝ «Չելսի»-ն, «Վիտորիա»-ն, «Ֆիորենտինա»-ն, «Ռապիդ»-ը, «Լուգանո»-ն, «Յուրգարդեն»-ն, «Լեգիա»-ն եւ «Սերկլ Բրյուգե»-ն, նվաճել են փլեյ-օֆֆի ուղեգիր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-5 - 9 -1 + 2
Կոտայքի լեռներ	-6 - 8 -1 +1
Կոտայքի նախալեռներ	-3 - 5 +3 + 5
Գեղարքունիք	-7 - 11 - 2 + 1
Լոռի	- 4 - 8 +1 + 4
Տավուշ	0 - 4 +3 + 6
Արագածոտնի լեռներ	- 6 - 9 0 - 2
Արագածոտնի նախալեռներ	-1 - 4 + 4 + 7

Արարատ	0 - 4 +6 + 8
Արմավիր	-1 - 5 + 5 + 7
Վայոց ձորի լեռներ	-6 - 10 0 - 2
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +12 + 14
Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Սյունիքի նախալեռներ	- 4 - 8 - 1 + 4
ԼՂՀ	- 3 - 7 0 + 6
Երեւան	0 - 2 + 2 + 4

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.12.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*